

**ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ
ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՈՒԹՅԱՆ
ԲԱԺԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ**

1917թ. դեկտեմբերին Խորհրդային Ռուսաստանի Ժողովուրդի որոշմամբ Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից ստեղծվեց Հայկական գործերի կոմիսարիատ*, որի հիմնական նպատակն էր՝ հայաբնակ վայրերում Խորհրդային քարոզչության (Կոմիսարիատը տարբեր քաղաքներում հրատարակում էր թերթեր՝ «Կարմիր դրոշակ», «Կարմիր օրեր», «Կարմիր բանվոր», «Կայծ», «Բանվորի կռիվ» և այլն) իրականացումը և դրանով իսկ՝ այդ վայրերում Խորհրդային իշխանության հստատման գործընթացի հեշտացումը: Հայկական գործերի կոմիսար նշանակվեց Վառլամ Ավանեսովը, իսկ նրա տեղակալն էր բանաստեղծ Վահան Տերյանը, որը, միաժամանակ, զբաղեցնում էր նաև կոմիսարիատի քարտուղարի պաշտոնը: Հայկական գործերի կոմիսարիատը ուներ յոթ բաժին. դրանք էին՝ տեղեկատվության և կապի, կուլտուր-լուսավորչական, հրատարակչական, գաղթականական և սոցիալական ապահովության (երբեմն օգտագործվել է նաև՝ օգնության), ռազմական, ագիտացիայի և վիճակագրության¹ բաժինները: Կոմիսարիատի պաշտոնաթերթն էր «Կոմունիստ» շաբաթաթերթը:

Գործունեության ընթացքում Հայկական գործերի կոմիսարիատը իր ներկայացուցչությունները հիմնեց Ռուսաստանի հայաշատ քաղաքներում, ինչպես նաև այն վայրերում, որտեղ Հայոց ցեղասպանությունից և, հատկապես, 1918թ. թուրքական ներխուժումից հետո կենտրոնացել էին հայ գաղթականների մեծ խմբեր, մասնավորապես՝ Աստրախանում, Սարատովում,

* Նշենք, որ Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատում գոյություն են ունեցել վեց կոմիսարիատներ՝ բելոռուսական, լատիշական, լեհական, հրեական, հայկական ու մահմեդական և տասերկու բաժիններ՝ գերմանական, զիրյանական, էստոնական, կալմիկական, կիրգիզական, Կովկասի լեռնցիների, հարավային սլավոնների, չեխոսլովակների, մարիական ժողովուրդների, չեխոսլովակների, չուվաշական, վուտկինյան և ուկրաինական:

¹ Ալիխանյան Ս.Տ., Հայկական Գործերի Կոմիսարիատի գործունեությունը, Երևան, 1958, էջ 28-32:

Դոնի Ռոստովում, Արմավիրում, Կիևում, Խարկովում, Օդեսայում, Բաքվում և այլն:

Կոմիսարիատի ջանքերի շնորհիվ, կարճ ժամանակաշրջանում, Աստրախանում և Հյուսիսային Կովկասի այլ քաղաքներում գաղթականների համար բացվեցին որբանոցներ և հիվանդանոցներ, նրանց մեծ մասին, թեկուզ և ժամանակավոր, ապահովեցին բնակարաններով կամ տեղավորվեցին հանրակացարաններում, գաղթականությանը հատկացրեցին մեծաքանակ բազմապիսի օգնություն:

Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատումից հետո, կարճ ժամանակ անց, 1921թ. մարտի 5-ին, Հայկական հորձերի կոմիսարիատը լուծարվեց. վերջինիս ողջ ունեցվածքը հանձնվեց Մոսկվայում Խորհրդային Հայաստանի նորաստեղծ ներկայացուցչությանը:

Ստորև հրապարակվող փաստաթուղթը Հայկական գործերի կոմիսարիատի տեղակալ Վահան Տերյանի կազմած հաշվետվության այն հատվածն է, որը ներկայացնում է Կոմիսարիատի գաղթականության և սոցիալական ապահովության բաժնի գործունեությունը: Փաստաթղթի լուսապատճեն պահվում է Հայաստանի ազգային արխիվում, իսկ բնօրինակը՝ Ռուսաստանի պետական պատմական արխիվում: Փաստաթուղթը հրապարակական որոշ շտկումներով: Փաստաթղթի վերնագիրը բնագրին է:

ԷՂԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
պատմական գիտությունների
թեկնածու

N 1
ОТЧЕТ О ДЕЯТЕЛЬНОСТИ КОМИССАРИАТА ПО
АРМЯНСКИМ ДЕЛАМ ПРИ НАРОДНОМ КОМИССАРИАТЕ
ПО ДЕЛАМ НАЦИОНАЛЬНОСТЕЙ

25.11.1918
Москва

...Беженский отдел¹ Комиссариата возник в конце мая текущего года. Не имея никаких средств Отдел естест-

венно, в первую очередь, поставил себе задачей добыть средства для открывающейся перед ним широкой деятельности. С этой целью Отдел вошел с ходатайством перед Комиссариатом Внутренних Дел, который и ассигновал шесть с лишним миллионов рублей для оказания помощи беженцам-армянам.

Имея в своем распоряжении такую сумму, Отдел приступил к организации медико-санитарного отряда для отправки в город Поволожья и на Северный Кавказ.

Первый отряд выехал 29-го июля в Астрахань во главе с тов. Теруаном, взяв с собой нужную сумму денег² и два вагона с медикаментами и другими товарами, для нужд беженцев Астрахани и Северного Кавказа. Организовав в Астрахани дело помощи беженцам, широкой волной хлынувших туда, отряд назначил уполномоченного и направился на Северный Кавказ, где им был учрежден Беженский Отдел при Пятигорском Отделении Комиссариата. Вслед за этим отрядом была отправлена в Астрахань новая партия товара (два вагона). В то же время в гор. Саратов по адресу беженской комиссии при местном совдепе отправлено два тюка мануфактуры.

После отправки отряда на Северный Кавказ намеренно было приступлено к организации отряда для отправки в Закавказье на помощь беженцам армянам, но, ввиду конфискации Грузинским Правительством³ имущества и денег Всероссийского Красного Креста, предназначенны для оказания помощи беженцам в Закавказье. Отдел пока оставил новое намерение отправить специальную миссию и в контакте с международным обществом Красного Креста старается организовать беженское село в Закавказьи на интернациональных началах.

Ввиду поступления сведений о колоооссальном наплыве беженцев армян в города Поволожья после падения Баку, очередной задачей Отдела была организация и отправка отряда на помощь беженцам в вышеназванный край. Поволожский отряд для оказания помощи беженцам в Закавказья выехала 1-го октября во главе с особо-уполномоченным

тов. Джараяном⁵. Для вспомоществования беженцам отряду ассигновано два миллиона рублей. Вместе с отрядом отправлено два вагона мануфактуры, белья, обуви. Работа отряда будет вестись по следующей инструкции: а) Врачебно-санитарная помощь, б) Питательная (питательные пункты, чайные, столовые), в) Трудовая (организация рабочих дружин, мастерских, швейных, столярных, сапожных, кузнечных, слесарных и т.д., г) Помощь детям (выделение детей из общей массы, приюты для детей и сирот, детские сады, начальные школы).

Отряд с целью организовать массы, создает беженские Комитеты из неимущих беженцев и в своей деятельности вообще придерживается нитрализации, стремится вложить в свою работу трудовой принцип.

Беженский Отдел в первых числах октября отправил одного своего представителя в Киев, другого в Ростов, третьего в Крым для оказания помощи и содействия правильному передвижению военно-пленных и беженцев армян. на первое время для этой цели ассигновано 150 000 р.

Деятельность же Беженского Отдела в центре, кроме организации отрядов для отправки в провинцию, состоит в оказании помощи беженцам и военно-пленным выдачей пособия на путевые расходы для отправки на Родину.

Отделом оказывается также помощь и разным лицам, очутившимся на положении беженцев, в числе их студентам и курсисткам. Отдел предполагает открыть в Москве общежитие для нуждающихся учащихся Высших Учебных заведений, на что Комиссариатом Социального Обеспечения ассигновано 10 000 рублей.

Кроме того, в самой Москве открыты два убежища: одно при так называемом Касперовском приюте, другое на Ваганковском кладбище. Первое предназначено для беженцев, едующих через Москву в другие города. Второе для беженцев длительно пребывающих в Москве.

Согласно последним сведениям поступившим из Астрахани, Поволожский отряд помощи беженцам в срочном порядке создал в Астрахани приют для детей беженцев. Приня-

ты меры к организации и второго приюта.

Ввиду большого процента больных среди беженцев также приняты меры к расширению существующей больницы для беженцев.

Сформирован врачебно-санитарный отряд снабженный госпитальным имуществом, который уже выехал на Северный Кавказ. Подготавливается второй врачебно-санитарный отряд для отправки на Северный Кавказ. Наказом для всех отрядов служит прежде всего помощь детям...

Зам. Комиссар В.Терян

ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 978ա, ք. 5-7: Լուսապատճեն: Մեքենագիր:

Ծանոթագրություններ

1. Վահան Տերյանի կողմից ներկայացվող Հայկական գործերի կոմիսարիատի սույն հաշվետվության մեջ գաղթականության և սոցիալական ապահովության բաժնի գործունեությունից բացի ներկայացվում է նաև գրական-հրատարակչական, կուլտուր-լուսավորչական, ռազմա-քարոզչական բաժինների գործունեությունը:

2. Գումարի չափը կազմել է 2 մլն ռուբլի, որից միայն 1.5 մլն ռուբլին է նախատեսված եղել Աստրախանում գտնվող հայ գաղթականների համար:

3. Խոսքը վրաստանի մենշևիկյան կառավարության մասին է:

4. Հառայանը եղել է Հայկական գործերի կոմիսարիատի ռազմա-քարոզչական բաժնի վարիչը և կոմիսարիատի կոլեգիայի անդամ: